

380 44

7/4 (Neg)
12-12


Կ. Գ. ԲԱԲԱՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԱՏՆԵՐԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ՍՊՈՐՏՈՒՄ
(ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՍՊԵԿՏ)

Մասիան սաես հսկա Արան
Թիկնած լեռանն Արարարյան
Հորդորում է ջահելներին
Հղում պարգամ.

-- Համախմբիր ուժը բազկիդ,
Որ փեր կանգնես դու սուրբ ազգիդ:

Թող փեղ գրնեն կոռ շղթայված
Օղակներում օլիմպիական
Խելքը, ուժը, բարությունը որպես պարգամ,
Որպես սպնիվ, վեհանձնական նշանարան:



քաղաքականացմանը, իսկ հետագայում այն վերածվեց առու-ծախի (կոմերցիա): «Արագ-բարձր-ուժեղ» արտաքուստ «ամ-նեղ» թվացող նշանաբանին փոխարինելու եկավ բացահայտ ագրեսիվ «Հաղթանակ ամեն գնով» նշանաբանը, որը լի է բազում «գայթակղություններով»: Այստեղից էլ սկիզբ առան բացասական շարժառիթներով թելադրված բացասական երևույթ-դրստորումները, որոնք կարող են հանգեցնել սոցիա-լական արատների:

Հասարակության ներկայիս ճգնաժամային իրավիճակում մարզիկի սոցիալականացումը, հատկապես նրա ձևավորման սկզբնական շրջանում մանկավարժահոգեբանական ստեղծա-գործության լուրջ խնդիրներից է: Օլիմպիզմի գաղափարների վերածնունդը կարող է նպաստել երիտասարդության լայն շրջանների բարոյահոգեբանական կայունությանը: Այդ գաղա-փարների դաստիարակչական ներգործության լայն հնարավո-րությունները կարող են իրացվել օլիմպիական կրթության շրջանակներում, համապատասխան նպատակային ուղղվա-ծությամբ, կիրառական բովանդակությամբ՝ պահպանելով կրթության հաջորդականությունը մարզական և կրթական հա-մակարգի բոլոր օղակներում:

ՍՊՈՐՏ-ՄԱՐԶԻԿ

Սպորտը մարդկային գործունեության մատչելի և ամե-նագրավիչ ոլորտներից է: Այն այսօր հանդես է գալիս որպես բազմագործառական և բազմաչափ սոցիալական երևույթ: Սպորտը կապված է մարդկային կյանքի և սոցիալական պրակտիկայի գրեթե բոլոր ոլորտների հետ՝ տնտեսական, քա-ղաքական, մշակութային, հոգևոր, դաստիարակչական, պաշտպանական և այլն: Այն ի գորու է լուծել չափազանց լայն շրջանակի խնդիրներ. նպաստում է ազգի առողջության ամ-րապնդմանը, երիտասարդության ապրելակերպի առողջաց-մանը, բնակչության գեղագիտական պահանջումները բա-վարմանը, օլիմպիզմին հատուկ բարոյական նորմերի արմա-տավորմանը, ազգային ինքնագիտակցության և հայրենասի-րության ձևավորմանը, նյութական պայմանների բարելավմա-նը և այլն:

Այնուամենայնիվ, սպորտն իր բովանդակային էությամբ յուրահատուկ շարժողական գործունեություն է՝ ուղղված մար-դու ֆիզիկական և հոգևոր կատարելությանը: Նա, ով իր կյան-քը կապում է սպորտի հետ, ձգտում է անհատապես հասնել հնարավորինս բարձր նվաճումների՝ օգտագործելով իր և տվյալ սպորտի շրջանակներում գոյություն ունեցող հնարա-վորությունները:

Բարձրակարգ մարզիկները ձևավորվում են՝ անցնելով ոչ միայն տևական մարզման գործընթացով, այլև դաստիարակ-վելով տարբեր միջավայրերում՝ կրթական, աշխատանքային, մշակութային և, իհարկե, ընտանեկան: Հասնելով բարձր նվա-ճումների, դառնալով չեմպիոններ՝ նրանց վարքագիծը դառ-նում է ընդօրինակելի, ապրելակերպը՝ սոցիալական մոդել: Նրանք երիտասարդության կուռքն են, ազգի հերոսը: Նրանց երբեք չի լքում գերազանցության զգացումը, ինքնավստա-հությունը, մանավանդ, երբ անհրաժեշտ են թիմին, ֆեդերա-ցիային, երկրին:

Եթե զանգվածային սպորտում անհրաժեշտ է գտնել ուսու-մը մարզման հետ համատեղելու արդյունավետ տարբերակ-ներ, ապա բարձր նվաճումների սպորտը պահանջում է անհա-

մենատ մեծ և բազմաբովանդակ «գոհաբերություններ»: Այսօր սպորտային գործունեությունը կարգավորող գլխավոր գործոն է հանդիսանում համաշխարհային մակարդակին համապատասխանող ծրագրավորված նվաճումը, որտեղ մեծ դեր ունեն մարզիկի առկա և պահեստային հնարավորությունները, ինչպես նաև մարզչի պրոֆեսիոնալ կարողությունները: Դա կանխորոշված է մարզիկի ծագումնաբանորեն պայմանավորված կառուցվածքային առանձնահատկություններով, նրա հոգեհուզական կարգավիճակով, կանոնավոր մարզումներով և օրգանիզմի ուժերը համախմբելու կարողությամբ: Հայտնի է, որ կյանքում մարդն օգտագործում է օրգանիզմի գործառական հնարավորությունների մինչև 35%-ը: Ֆիզիկական լավագույն տվյալներով օժտված բարձրակարգ մարզիկները կարող են համախմբել օրգանիզմի բացարձակ հնարավորությունների մինչև 65%-ը: Ավելին հնարավոր չէ նույնիսկ լարված մարզումների ճանապարհով:

Այսպիսին է սպորտը, այսպիսին են նրա հարյուրավոր ավանդական և ոչ ավանդական ձևերը, որոնք զարգացել են տարբեր ժամանակների օլիմպիական նշանաբանների ներքո: Մինչև 50-ական թվականները սպորտի նշանաբանն էր՝ «Կարևորը հաղթելը չէ, այլ մասնակցելը», և այդ տարիներին սպորտը համակված էր ռոմանտիզմով, իշխողը բարյացակամությունն էր և վեհանձնությունը: Տարիներ անց սպորտը նոր վերելք ապրեց ամենուրեք ազդարարվող, արտաքուստ «ամենեղ» և խորհրդանշական թվացող «Արագ, բարձր, ուժեղ» նշանաբանով: Բայց իրականում դա նշանակում էր «Բոլորից արագ», «Բոլորից բարձր», «Բոլորից ուժեղ»: Իսկ թե ի՞նչ գնով, լավ գիտեին մարզիկն ու մարզիչը: Սպորտի առաջընթացն ու համաշխարհայնացումը լուրջ մտահոգությունների տեղիք սովեցին մարզաշխարհին: Գնալով բորբոքվեցին նախ՝ գերատեսչական, հետո՝ քաղաքական, միջպետական, ազգամիջյան կրքերը: Դրա վառ ապացույցն էր 1952 թ. Օլիմպիական խաղերում (Հելսինկի, Ֆինլանդիա) ԽՍՀՄ ֆուտբոլիստների պարտությունը հարավսլավացիներից: Ժողովուրդների առաջնորդի դաժան կամքով թիմը խստորեն պատժվեց (ցրեցին), իսկ մարզիչները որակազրկվեցին: Վերջին տարիների դաժան նշանաբանը՝ «Հաղթանակ ամեն գնով», փակեց դռները գրեթե ամեն տեսակի պայմանականությունների առջև:

Սպորտը դարձավ առուժախի առարկա (ապրանք), մարզիկները հնարավորություն ձեռք բերեցին վաստակելու անհավատալի չափի գումարներ, խաղային մրցահարթակները և կռիվամարտի ռինգերը վերածվում են հանդիսականների «կրքամարտի»: «Ջարդիր մռութը», «Վերջը տո՛ւր», «Խեղդիր» և այլ կոպիտ բղավոցներ են հնչում շատ դահլիճներում: Նույնիսկ աշխարհի առաջնությունների ժամանակ մարզադաշտերը երբեմն նմանվում են ռազմադաշտերի: Պատվախնդրությամբ թելադրված աղմկալից հակամարտությունները հազվադեպ չեն նույնիսկ զանգվածային սպորտում, հատկապես մեծապայքարային և որոշ թիմային մրցումներում: Սակայն շահախնդրությունը, առավել ևս անզուսպ շահամոլությունը, որ ծնվել է շուկայական կադապարի ծակուծուկերում, խթանում է հարստանալու տենչը: Նման «զայթակղությունից» չի կարող հրաժարվել ո՛չ մարզիկը, ո՛չ մարզիչը և ո՛չ էլ ֆեդերացիան:


ՄՊՈՐՏ, ԲԱՑԱՍԱՎԱՆ (ՆԵԳԱՏԻՎԱՅԻՆ) ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ, ԴՐԱՆԵՎՈՐՈՒՄՆԵՐ

Մարզական նվաճումների հետ աճում են եկամուտները: Իսկ «Ամեն գնով» ձեռք բերված հաղթանակը հարվածում է մարզիկի լավագույն, մինչև ժամանակ ամենախոցելի արժանիքին՝ բարոյականությանը: Այստեղից էլ ծնվում են բացասական շարժառիթներով թելադրված երևույթներ ու դրսևորումներ, որոնք շոշափում են մարզիկի կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտները (տե՛ս նկ. 1):

1. Գերլարվածության պայմաններում տևական մարզումները, հատկապես խթանիչների և անաբոլիկների օգտագործմամբ, հյուժում են օրգանիզմը, սպառում նրա պահեստային ուժերը, հանգեցնում մի շարք հիվանդությունների: Սպորտում խթանիչների (դոպինգ) օգտագործումը ՄՕԿ-ի կողմից դատապարտելի է համարվել դեռ 1962 թվականից, իսկ 1967 թվականից խստիվ արգելված է: Չնայած դրան, այսօր էլ քիչ չեն դեպքերը, երբ առաջնությունը նվաճած ոսկե մեդալակիր մարզիկը, որի արյան մեջ հայտնաբերվել

են (դոպինգ թեստ) արգելված դեղանյութեր, զրկվում է իր տիտղոսներից, տուգանվում է և նույնիսկ որակազրկվում:

2. Մարզումներով չափազանց հրապուրվելը, կրթության հարցերը ժամանակին անտեսելը հանգեցնում է մարզիկի մտավոր թերզարգացմանը: Դա մարզչի կողմից մարզման սխալ պլանավորման և մարզիկի ոչ գրագետ մոտեցման արդյունք է: Երբեմն էլ՝ ձևական դիպլոմավորման արգասիք:
3. Մարզական երկարատև հավաքները, շահավետ ուղևորությունները, խոշոր մրցանակները, մեծարժեք նվիրատվությունները, «սպառողական» ապրելաոճը, պահանջ-մունքների վերընթաց աճի ներկայիս միտումը կարող են հանգեցնել անձնապաշտության, սպառելու մոլուցքի և շահամոլության:
4. Բարձրակարգ մարզիկի կյանքը լի է հետաքրքիր շրջապայություններով, տարբեր ազգերի և դավանանքի տեր մարդկանց հետ մրցակցական և ընկերական հանդիպումներով: Մարզական կուլտուրայի և էթիկայի նորմերի պակասը անկանխատեսելի իրադրություններում կարող է առաջացնել կրոնամոլությամբ կամ ազգայնամոլությամբ թելադրված դրսևորումներ:
5. Բարոյապես չհասունացած մարզիկը կարող է ի չարս օգտագործել իր ֆիզիկական կարողությունները և հանդես գալ որպես կամակատար, նույնիսկ քրեածին դրսևորումներով և տարվել արգրեսիվ ու դատապարտելի կամայականությամբ: Սրանք պատճառաբանված են մարզիկի խառնվածքի առանձնահատկություններով, բնավորության գծերով, մարզչի մանկավարժական կարողություններով և հատկապես, տվյալ սպորտի ռիսկայնության աստիճանով:



Նկ. 1

Մարզիկի կենսագործունեության հնարավոր բացասական դրսևորումները պայմանավորված են նաև օբյեկտիվ բնույթի տարբեր հանգամանքներով:

1. Բացասական դրսևորումները հաճախ պայմանավորված են սպորտի էությանը, բնույթով (ցիկլիկ թե ացիկլիկ, մենապայքարային թե կոլեկտիվ և այլն), մրցման պայմաններով, արդյունքների գնահատման եղանակով և այլն: Այն մարզաձևերը, որտեղ հակամարտող կողմերի դաշտերը խիստ սահմանազատված են, և բացակայում է անմիջական շփումը (վոլեյբոլ, թենիս, բադմինտոն, սեղանի թենիս և այլն), պայքարն ընթանում է կռռելտ, մարզական էթիկայի շրջանակներում: Առավել հաճախ են կոնֆլիկտները, երբեմն էլ ազդեսիվ բնույթի, մենապայքարային և որոշ թիմա-

յին մարզաձևերում (ըմբշամարտ, բռնցքամարտ, ֆուտբոլ, հոկեյ, բասկետբոլ, ձեռնագնդակ, ջրագնդակ և այլն):

2. Կան մարզաձևեր, որտեղ մարզիկի, առավել ևս մարզուհու կարիերան կարճատև է (մինչև 17-21 տարի) և անկանխատեսելի (սպորտային և գեղարվեստական մարմնամարզություն, գեղասահք և այլն): Այս հանգամանքը «ստիպում է» մարզիչներին արագացնելու և ամեն կերպ խթանելու մարզական հաջողությունները, երբեմն էլ՝ ի վնաս ոչ լրիվ ձևավորված օրգանիզմի:
3. Անագնիվ մրցավարությունը, կողմնակալ գնահատականները, կեղծ հայտերը բացասաբար են անդրադառնում մարզիկների գիտակցության վրա, զայրույթով լցնում նրանց սրտերը, չարացնում, հատկապես երբ նման տվյալների հիման վրա են կոմպլեկտավորվում հավաքի մասնակիցները կամ մրցող թիմերը:
4. Հանդիսատեսը (դահլիճ, ստադիոն), հատկապես ոչ ձեռնհաս մարզասերը, երբեմն անառողջ իրարանցում է բերում իր հետ և տեղիք տալիս անվայել բարքերի, կոպիտ ու անզուսպ կրքերի ինչպես տրիբունայում, այնպես էլ մրցակիցների շրջանում:
5. Սպորտային նշանակալից հաջողությունները մարզիկին դարձնում են մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և լայն հասարակայնության սևեռուն ուշադրության առարկա: Աղմկալից համբավը, վայ-լրագրողների շռայլ գովաբանությունները (արջի ծառայություն), ընկերների հիացնունքը նույնպես կարող են բացասաբար անդրադառնալ բարոյապես ոչ բավարար չափով կոփված մարզիկի անձի վրա: Երբեմն էլ մարզիկն իր վարքով ինքն է նպաստում սեփական անձը պաշտամունքի օբյեկտ դարձնելուն, իրեն վերագրելով անցյալի չնվաճած հաղթանակներ կամ չվաստակած փառք: Մի խոսքով, *սպորտը մարզիկի ֆիզիկական և հոգևոր ուժերի կայունության մեծ փորձություն է*: Ընդ որում, որքան բարձր է մարզիկի որակավորումը, այնքան մեծ է նրա անձնական պատասխանատվությունը թիմի, կոլեկտիվի և հասարակության առաջ: Այս ուսանելի հրամայականը, որպես երևույթ մարզական կուլտուրայի բացառիկ ուղիներով ժառանգորդաբար փոխանցվում է սերնդեսերունդ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՍՊՈՐՏՈՒՄ

Մանկապատանեկան սպորտում սկսնակներն անխոհաբար նմանակում են իրենց ընտրյալ «կուռքի» ոչ միայն մարզական շարժաբնույթը, այլև ապրելաժողովրդը, նույնիսկ վարվելաձևը: Եթե կուռքի վարքագիծը խտտորված է և նա ծխում է ու խմում, թմրամյութեր և խթանիչներ է օգտագործում, ուրեմն նա մեծ վնաս է հասցնում առաջին հերթին մարզական հերթափոխին: Բնականաբար, այստեղ են թափանցում և բուռն դնում այն սոցիալական արատները, որոնք առավել ցայտուն են դրսևորվելու հետագայում մեծ սպորտում:

Հասարակության ներկայիս սոցիալական իրավիճակում, որտեղ նկատելի են բարոյահոգեբանական ճգնաժամն ու աշխարհայացքային քաոսը, դժվար է անադարտ պահել մարզաշխարհի սրբագին օրենքները (խարտիա), որոնք ընդունվել են դեռ XIX դարի վերջերից: Նման պայմաններում, հատկապես երբ մարզիկի, մարզչի և մարզական ֆեդերացիայի շահերը չեն համընկնում, երբ աճող պահանջունքների տարերքում փոփոխվում են բոլոր երեք սուբյեկտների շարժառիթային կառուցվածքները, գնալով բարդանում են պատանի մարզիկների շրջանում տարվող դաստիարակչական աշխատանքները, բարոյականության ամուր հիմքերի ձևավորումը:

Այսօր մարզիկի սոցիալականացումը, հատկապես նրա ձևավորման սկզբնական շրջանում, մանկավարժական ստեղծագործության լուրջ խնդիր է: Դեռահասը կյանք է մտնում կենսաբանորեն հարմարվելու մեխանիզմներով, որոնք բազմապատկվում են ու կատարելագործվում օրգանիզմի աճին ու զարգացմանը զուգընթաց: Սոցիալական ադապտացիան առավել տևական գործընթաց է, որը կարգավորվում է նախընտրած սոցիալական ոլորտին համապատասխան հանրային պայմաններով ու նորմերով: Կանցնեն երկար տարիներ, մինչև դեռահասը կընտելանա սիրված սպորտի մարզման հետաքրքիր ու դժվարին, պայմաններին, կկողմնորոշվի փոխհարաբերություններ հաստատելու մարզչի, ընկերների, ավագների ու կրտսերների, ծանոթների ու անծանոթների հետ և կգտնի իր արժանի տեղը կոլեկտիվում ու շրջապատում: Դեռահաս ա-

պագա մարզիկի կայացման խնդիրը գրեթե ամբողջությամբ կախված է մարզչի հոգեբանամանկավարժական պատրաստվածությունից, նրա կուլտուրայից և ինտելեկտից, թե ինչպես է նա կարողանում օգտագործել սպորտի մատչելի դաստիարակչական լծակները բարոյապես կայուն և հոգեպես լիարժեք մարզիկներ պատրաստելու գործում: Շատ գիտնականների համոզմամբ [8], վերջին տարիներս մարզիչները, որպես կանոն, աչքաթող են արել սպորտի հոգևոր դաստիարակության ներուժը, սկեռելով ուշադրությունը միայն մարզական բարձր նվաճումների վրա: Շահադիտական նկատառումներով առաջացած նման երևույթը հակասում է սպորտի մարդասիրական սկզբունքներին և լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս մանկավարժ-գիտնականների շրջանում: Դեռահասի սոցիալականացման խնդիրն այսօր կարևորվում է նրանով, որ այդ տարիքը վերին աստիճանի զգայուն է շրջակա միջավայրի բացասական գործոնների նկատմամբ: Միևնույն ժամանակ, մարզական պրակտիկան ցույց է տալիս, որ մարզչի նկատմամբ ունեցած նվիրվածության, հավատի և բնորոշ հոգեհուզական լիառատության շնորհիվ դեռահաս մարզիկն ավելի է հակված սոցիալականացմանը: Այդ են վկայում դեռահասների շրջանում կատարված հետազոտությունները [7], որտեղ օգտագործվել են մի շարք անձնային մեթոդիկաներ (ինքնագնահատման և հավակնության, ագրեսիվության և ինքնահսկողության): Առավել հաջող են դեռահաս մարզիկների արդյունքները, որոնք գերազանցում են սպորտով կամ որևէ արտադասարանային օգտակար գործունեությունից դուրս մնացած երեխաների արդյունքներին: Սպորտի միջոցով դեռահասների սոցիալականացման են նվիրված անցյալի և հատկապես վերջին (ճգնաժամային) շրջանի շատ հետազոտություններ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարզիկի վաղ սոցիալականացումը կարևոր նախապայման է սպորտում բարձր նվաճումների հասնելու համար [5]:

Բնական է, որ մարզական վարպետության բարձունքներին հասնում են ոչ բոլորը: Սպորտի յուրաքանչյուր տեսակ ունի իր խիստ որոշակի առանձնահատկությունները, որոնք պահանջում են համապատասխան օժտվածություն ոչ միայն շարժողական բացառիկ հմտությունների (թերևս անսահման), կամ օրգանիզմի բարձրաստիճան գործառական հնարավորութ-

յունների (ոչ անսահման) առումով, այլ նաև ամուր հոգեհուզական կերտվածքով և կայուն անհատական խառնվածքով: Մասնագետները լավ գիտեն, որ հաղթանակը սպորտում մարզիկի տաղանդի, մարզչի շնորհաշատության, բժշկի պատշաճ հսկողության, հոգեբանի հմուտ կռահումների և, ինչ խոսք, նաև պատահականության փայլուն համադրություն է: Իհարկե, կան հոգեֆիզիոլոգիական ախտորոշման նորագույն տեխնոլոգիաներ, որոնք օգնում են մարզչին, բժշկին և հոգեբանին նորովի թափանցելու մարզիկի անձնային կառուցվածքի խորքերը և վերաիմաստավորելու կիրառվող մասնագիտական և զուտ մանկավարժական մեթոդիկաները: Հմուտ մանկավարժի և հոգեբանի օգնությամբ պատշաճ հունամիստական դաստիարակություն ստացած և սոցիալապես հասունացած մարզիկի մոտ, բնականաբար, պարտքի զգացում է առաջանում մարզչի և ողջ կոլեկտիվի հանդեպ, որն իր հերթին նպաստում է նրա սոցիալական պատասխանատվության ձևավորմանը:

Մասնագետ գիտնականները [5] գտնում են, որ օլիմպիական շարժման բոլոր սուբյեկտների կողմից իրականացվող մանկավարժական գործընթացի գլխավոր խնդիրը մարզիկի սոցիալականացումն է և այդ կոնտեքստում օլիմպիական կուլտուրայի ձևավորումը, որի միջոցով սերունդներին պետք է փոխանցվեն օլիմպիական արժեքները: Այդ նպատակով մարզչի առջև պետք է դրվեն հետևյալ խնդիրները՝

- 1) Մարզական կոլեկտիվում պետք է ստեղծվի համապատասխան բարոյա-էթիկական մթնոլորտ, ձևավորվի մարզիկի հոգևոր աշխարհը, բարձրացվի նրա օլիմպիական կրթվածության մակարդակը (օլիմպիական շարժման նպատակն ու խնդիրները, Օլիմպիական խաղերի պատմությունը):
- 2) Մարզիկների շրջանում պետք է ձևավորվի համապատասխան մարզական կուլտուրա, որի հիմքն է կազմում դարերի փորձություն անցած օլիմպիական կուլտուրան:
- 3) Յուրաքանչյուր մարզիկի մոտ պետք է ձևավորվի սոցիալական պատասխանատվություն հասարակության առջև, որի օժանդակությամբ նա հասել է մարզական հաջողությունների:

Վերլուծելով այս խնդիրները և հիմք ընդունելով մարզիկի պատրաստման ներկայիս պրակտիկան, կարելի է հանգել այն եզրակացության, որ սոցիալականացումն այս միջավայրում դիտվում է որպես կարևոր հիմնահարց և պետք է ընթանա բարձրակարգ մարզիկի ձևավորման ողջ ընթացքում՝ սկսած մանկապատանեկան տարիքից:

Այստեղ կա մեկ խնդիր ևս: Հասարակության մեջ տարբեր պատճառներով սպորտը թողած լավագույն մարզիկները (Եվրոպայի, աշխարհի, Օլիմպիական խաղերի չեմպիոններ, մրցանակակիրներ) այսօր կազմում են մի սոցիալական խումբ, որը դժվարությամբ է հարմարվում կյանքի «նոր պայմաններին»: Հասարակության նախկին ընտրանին, որը մեծ ուժերի և զոհաբերությունների գնով ժամանակին նվաճել է ժողովրդի սերն ու հարգանքը, ունեցել է քիչ թե շատ բնականոն նյութական պայմաններ, այսօր կանգնել է բարոյական և սոցիալական խնդիրների առաջ: Սոցիոլոգիական հետազոտությունները հաստատում են նման խնդրի գոյությունը: Ժամանակին սոցիալականացված և սոցիալապես հասուն մարզիկի ադապտացիան կընթանա առավել մեղմ, առանց լուրջ սոցիալական կոնֆլիկտների:

Սպորտն իր էությամբ, որպես համամարդկային արժեքների ակունքներից մեկը, կրթության, գիտության, մշակույթի և եկեղեցու հետ միասնաբար պետք է նպաստի հասարակության բորայական հիմքերի կայունացմանը:

Լինելով տևական գործընթաց՝ սոցիալականացումը միևնույն ժամանակ բազմաշերտ է և ունի անձի գործունեությամբ ու նրա միջավայրով պայմանավորված առանձնահատկություններ: Բացի այդ, սոցիալականացումը պայմանավորված է սեռատարիքային առանձնահատկություններով, իսկ սպորտում՝ նաև նրա էությամբ և մարզիկի պատրաստվածության աստիճանով:

Գոյություն ունեն սոցիալականացման տարբեր մեխանիզմներ (ուղիներ)

1. Բարոյական արժեքները, մարզական ավանդույթները և կուլտուրան փոխանցվում են ժառանգորդաբար՝ մարզական սերնդից սերունդ:
2. Ինքնակրթության ճանապարհով՝ ինքնակատարելագործմամբ:

3. Միջավայրի (կուլեկտիվ, խումբ, մարզիչ, առանձին անհատներ) միջամտությամբ և այլն:

Մի խոսքով, սոցիալականացումն այսօր պատճառաբանված է ոչ միայն սպորտում առկա բացասական երևույթների դրսևորման մտահոգությամբ (ագրեսիա, դաժանություն, բռնություն, շահամոլություն և այլն), այլև այսօրվա երիտասարդության շրջանում նկատվող բարոյալքության որոշ միտումներով:

Օլիմպիզմի գաղափարներով պետք է հագեցած լինի նաև կրթական համակարգի բոլոր օղակների ֆիզիկական դաստիարակությունը: Ինչ վերաբերում է մանկապատանեկան սպորտին, որը մարզական օջախների մեջ համարվում է *ամենագանգվածայինը*, ապա այն ամենաբարեբեր միջավայրն է ապագա երիտասարդության սոցիալականացման համար:

Մեծ դեր է խաղում այստեղ մարզիկի (սոցիալականացվող սուբյեկտի), հատկապես մարզչի (սոցիալականացնող օբյեկտի) շարժառիթային կառուցվածքի առանձնահատկությունները, նրա ուղղվածության արտահայտվածությունը:

ՄԱՐԶԻՉ-ՄԱՐԶԻԿ-ԿՈՒԵԿՏԻՎ

Մանկապատանեկան սպորտում մարզչի արտաքուստ խստապահանջ, երբեմն էլ անողոր թվացող մանկավարժական գործունեությունը աչքի է ընկնում բավականաչափ ռոմանտիզմով (սպորտային ռոմանտիզմ) և բանաստեղծական նրբերանգներով: Սպորտի որոշ ձևեր (սպորտային մարմնամարզություն, ջրացատկ, ֆրիսթայլ և այլն) կապված են նաև մեծ ռիսկի հետ: Իսկ թե ինչո՞վ է պայմանավորված այդ մասնագիտության ընտրությունը, կամ ի՞նչ չափանիշներով են ձևավորվում նրա գործունեության շարժառիթները, կարելի է պատկերացնել՝ հետևելով գործոնների այս շղթային՝

1. Սերն ու նվիրվածությունը նախընտրած մասնագիտության նկատմամբ:
2. Մանկան աշխարհի հետ անմիջական շփումները, որոնց նմանը գրեթե չկա և ոչ մի մասնագիտությունում:
3. Շփումները տեղի և արտերկրի գործընկերների, մրցավարների հետ, ժանոթությունները ուղևորությունների և հա-

վաքների ժամանակ (նոր մարդիկ, նոր քաղաքներ, նոր մեթոդիկաներ):

4. Բարոյահուզական մեծ բավարարություն, որն առաջացնում է երեխաների անմնացորդ նվիրվածությունը և անպահման սերն ու հարգանքը:
5. Երեխաների մարզական հաջողությունները (արդյունքները) և հավատը նրա ապագայի (ծրագրված) նկատմամբ
6. Բազմակողմանի գիտելիքների (լեզու, անատոմիա, ֆիզիոլոգիա, հոգեբանություն և ուրիշ) դրսևորման (իրացման) և մեթոդների կիրառման ռեալ հնարավորություններ պարապմունքների և մրցումների ընթացքում:
7. Սեփական փորձով և անձնական օրինակներով երեխայի ֆիզիկականի և հոգեկանի վրա միաժամանակ ներգործելու և արդյունքներին հետևելու հնարավորություն:
8. Ծնողների վստահությունը և հարգանքը:
9. Կոլեկտիվի խրախուսանքը, բարոյական և նյութական օգնությունը:
10. Անձնական շահագրգռվածությունը (բարոյական, նյութական):

Պատանեկան և ավագ տարիքում շարունակվող մարզական պարապմունքները բարոյահոգեկան առավել վեհ զգացմունքներ են առաջացնում, որոնք քաջալերում են և խթանում մարզչի գործունեությունը, տալիս նրան ուժ ու վստահություն սեփական ծրագրերի իրականացման գործում: Հաջողությունները պարզևում են հոգեկան բավարարություն, ինչպես նաև նյութական բարիքներ: Ոմանք էլ արժանանում են մարզական բարձր կոչումների: Այստեղ մարզիչը գործում է գրեթե միայնակ՝ ստանձնելով թե՛ հոգեբանի և թե՛ մարզիչ-մանկավարժի կարևոր դերերը:

Բարձրագույն նվաճումների սպորտում մարզիչը միայնակ չի պատրաստում և չի էլ կարող պատրաստել օլիմպիական կամ աշխարհի չեմպիոններ: Այդ դժվարին գործում նրան օգնում են շատերը (բժիշկ, հոգեբան, պարուսույց, նվագակցող, տեխնիկ, օպերատոր, երբեմն էլ խոհարար և ուրիշներ), իսկ նա կոորդինացնում է բոլորի աշխատանքն ու պատասխան տալիս արդյունքների համար: Օլիմպիական սպորտի պատմությանը հայտնի են շատ ականավոր մանկավարժ-մարզիչներ (Յու. Շտուկման, Ա. Պոլեժան, Ա. Միշակով, Ս. Ղարագոյգ-

39.173

յան, Ս. Ռոստորացկի, Լ. Դեմիսովա, Ջ. Շիշմանովա, Մ. Լիսիցյան, Ե. Չայկովսկայա, Տ. Տարասովա, Տ. Մոսկվինա, և շատ ուրիշներ), որոնց ղեկավարությամբ պատրաստվել են ոչ միայն աշխարհահռչակ չեմպիոններ, այլև բարձր ինտելեկտով անգերազանցելի անհատականություններ (Վ. Չուկարին, Դ. Շահինյան, Յու. Տիտով, Դ. Ռիգերո, Յու. Վարդանյան, Գ. Շատկով, Լ. Լատինինա, Ն. Կուչինսկայա, Վ. Չասլավսկա, Լ. Տուրիշչևա, Ի. Դերյուզինա, Մ. Գիգովա, Ի. Ռոդինա, Լ. Պախոնովա, Ն. Լինիչուկ, Ի. Մոխեսևա և ուրիշներ):

Երկար ու ձիգ տարիներ երիտասարդությունը (և ոչ միայն) կողմնորոշվում էր նման ականավոր անհատներով և համոզված էր, որ սպորտը մարմնական ուժ ու զեղեցկություն տալուց բացի ճանապարհ է դեպի հոգևոր կատարելություն, որ սպորտը նպաստում է բարոյասոցիալական հասունացմանը, բարվոք կյանքի ճիշտ ընտրությանը: Այսօր այլ է իրականությունը, և սպորտը շատ բնագավառների նման գերծ չմնաց հասարակության բացասական երևույթների ներգործությունից: Սոցիալական արատները ծնվում են փոքր ու մեծ բացասական դրսևորումներից և պատճառաբանված են տվյալ սպորտի էությամբ, նրա միջավայրով և տարիքային խմբերով: Սպորտի յուրաքանչյուր օղակ, յուրաքանչյուր սուբյեկտ ունի մեղքի իր բաժինը, հետևաբար և իր բաժին պատասխանատվությունը (մարզիկը, մարզիչը, խումբը, ֆեդերացիան):

Մարզիկի սոցիալական պատասխանատվությունը պետք է դիտվի մնացած բոլոր սուբյեկտների՝ մարզչի, խմբի (կոլեկտիվի), ֆեդերացիայի բարոյական պատասխանատվության կոնտեքստում:

Մարզիկին բնորոշ հնարավոր բացասական դրսևորումները կարող են լինել.

Վնասաբեր արատներ

Մշտապես կամ դեպքից դեպք ծխելը,

1. Ալկոհոլային խմիչքներ օգտագործելը,
3. Թմրանյութեր օգտագործելը (ներարկում),
4. Արգելված խթանիչներ օգտագործելը:

Վարքագծային բնույթի արատներ

1. Անհարգալից վերաբերմունք փոքրերի կամ թույլերի նկատմամբ,
2. Կոնֆլիկտային իրավիճակներ հրահրելը, սադրելը,
3. Ազրեսիայի դրսևորումներ (կոլեկտիվում, դպրոցում, բակում, փողոցում),
4. Դաժանության դրսևորումներ մարդկանց շրջապատում, կենդանիների և բնության հանդեպ,
5. Ֆիզիկական և կամային կարգավիճակի չարաշահումներ (ծեծ, պատվերով ահաբեկչություն և հաշվեհարդարներ):

Բարոյաէթիկական բնույթի արատներ

1. Մեծամտություն,
2. Ստախտություն,
3. Անազնվություն,
4. Մանր խուլիգանություն (քրեապես չհետապնդվող),
5. Գողություն (քրեապես չհետապնդվող) կոլեկտիվում, դպրոցում, տանը:

Հաղորդակցվելու արատավոր ոճ

1. Մայրենի լեզուն աղավաղելը կամ խառնաշփոթելը,
2. Մարզական լեզվին (տերմինաբանությանը) չտիրապետելը, ժարգոնով խոսելը,
3. Կոպիտ արտահայտություններ օգտագործելը,
4. Հայիոյանքներով խոսելը:

Մարզչին բնորոշ հնարավոր բացասական դրսևորումները կարող են լինել՝

1. Ծխելը սաների ներկայությամբ,
2. Սաներին ներկայանալը հարբած վիճակում,
3. Գունարային խաղերը սաների ներկայությամբ (հավաքների ժամանակ),

4. Մարզման գործընթացում մայրենի լեզուն աղավաղելը, մարզական տերմինաբանությունը խառը կամ ժարգոնային լեզվով փոխարինելը,
5. Կոպիտ արտահայտություններ կամ հայիոյանքներ օգտագործելը,
6. Մարզական ռեժիմը խախտելը, անպարտաճանաչությունը,
7. Անհարկի կամ կոպիտ պատժամիջոցների կիրառումը պարապմունքների ընթացքում:

✓ **Սկսնակների հետ պարապող մարզիչը** հաճախ անհավասար ուշադրություն է ցուցաբերում երեխաների նկատմամբ՝ դիմելով բնական սելեկցիայի (ընտրասերում) նենգափոխված միջոցների: «Ուժեղների» համար ստեղծում է աճելու հնարավորություն, իսկ «թույլերին» անտեսում է այնքան, մինչև կիսաթափվեն և կհեռանան խմբից: Արդյունքներ ակնկալելու շտապողականությունը երբեմն խանգարում է մարզչին ճիշտ գնահատելու երեխայի կարողությունները: Արդյունքում կորցրած տարիներ ու հավատ իր և սիրած մարզչի նկատմամբ:

✓ **Վերջին տասնամյակների պրակտիկան** ցույց է տալիս, որ մարզադպրոցներում յուրաքանչյուր մարզիչ ունի «թույլերի» որոշ քանակի խմբեր, այսպես կոչված «դոնորներ», որոնք ապահովում են մարզչի լրացուցիչ վարձատրությունը (ծնողների հաշվին): Ցավոք սրամբ նույնպես սոցիալական արատներ են, որոնք ծնվել են բացասական միջավայրում, մարզչի կողմից երեխայի և ծնողի հույսն ու հավատը չարաշահելու ճանապարհով:

✓ **Նման երևույթները**, որոնք տեղ են գտել մարզական պրակտիկայում, ցույց են տալիս, որ սոցիալական պատասխանատվության բաժնի մեծ մասը պետք է պատկանի մարզչին: Միևնույն շտապողականությունը հանգեցնում է նաև նրան, որ երբեմն մարզիչը չափից դուրս և անժամանակ բարձրացնում է բեռնվածության լարվածությունը (հատկապես ուժային), որի հետևանքով ձևախախտվում է երեխայի հենաշարժական ապարատը: Օրինակ՝ մարմնամարզության խմբերում հազվադեպ չեն, երբ սկսնակների ուսագոտին աչքի է ընկնում անհամաչափ «հզորությամբ», իսկ հասակը՝ անհամեմատ կարճությամբ: Նման անհամաչա-

փությունն անդրադառնում է նրա հետագա առաջընթացի վրա, դարձնելով մարմնամարզիկին սակավ հեռանկարային, քանի որ մարմնի համաչափությունը (կազմվածքի ներդաշնակությունը) նրբագեղության գնահատման կարևոր չափանիշ է համարվում: Մարզիչն առհասարակ պարտավոր է իմանալ գերլարվածության կամ գերբեռնվածության վնասակար հետևանքները:

Մարզական պրակտիկայում կան նաև այլ բնույթի բացասական երևույթներ, որոնք ծնունդ են առել 70-ական թվականների վերջերից: Օլիմպիական ծրագրերի ընդլայնման հետևանքով մարզական շատ ֆեդերացիաներ ձգտում են ընդարձակել իրենց մասնակցությունը միջազգային մրցումներում, հատկապես Օլիմպիական խաղերում: Անտեսելով մարդասիրական սկզբունքները և մասնագետների հորդորանքը մեծ եռանդով կանանց ներքաշում են տղամարդկանց սպորտի շարքերը: Այդպես են առաջացել կանանց ջրագնդակը, ձյուդոն, ծողացատկը, ժանրամարտը և այլն: Թիմային, հաճախ էլ անձնական շահերով պատճառաբանված և սուբյեկտիվ փաստարկներով ու մարդու իրավունքների շահարկումներով սքողված՝ մարզիչները զբաղված են *ժանրորդուհիներ* պատրաստելով: Ժամանակին գիտնական բժիշկներն ու մանկավարժները [2], [4], [6] մարզական հանրությանն են ներկայացրել իրենց մտահոգություններն այն մասին, որ կանանց ուսագոտու համեմատական թուլության պատճառով և օրգանիզմի առանձնահատկություններից ելնելով, նման ձևերը, հատկապես ժանրամարտը, հակացուցված է կանանց: Կնոջ մարզական կարիերան համեմատաբար կարճ է և անկանխատեսելի: Այս համագամանքը բնականաբար ստիպելու է մարզչին կիրառել մարզման առավել ինտենսիվ ռեժիմ, իսկ բարձր նվաճումների սպորտում չկա հաղթանակ առանց անողորք ու ինքնամոռաց մարզումների: Դժվար է պատկերացնել, որ ամեն օր տոննաներով երկաթ բարձրացնող կինը կպահպանի իր կանացիությունը, մանավանդ երբ նա մարզվում է միևնույն տղամարդուն բնորոշ հոգեֆիզիկական չափանիշներով:

✓ Վերջին տարիներին կանացի սպորտում կիրառվող նման «էմանսիպացիան», որը «հրահրվում է» նաև որոշ լրագրողների կողմից, հավասարազոր է անհաշվենկատ արկածախնդրության, որն անպայման տանելու է բարոյասոցիալական այլասերվածության: Մարզական հասարակայնության ուշադրությունից չպետք է վրիպի մի համագամանք ևս: Երիտասարդության, հատկապես հայուհիների ֆիզիկական դաստիարակության, առավել ևս սպորտի զարգացման գործում պետք է հաշվի առնվեն ազգի էթնիկական խնդիրները, այսինքն՝ *ֆիզիկական դաստիարակության և սպորտի համակարգը պետք է ունենա ազգային կողմնորոշվածություն* [1]: Դեռ ավելին, հունամիզմի գաղափարները կենսագործելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել հատուկ բժշկամեթոդական կենտրոն (չկա այդպիսին), որը կիրականացնի ընդհանուր հսկողություն և մարզչական պրակտիկայում կսահմանի *անվնաս գործունեության պատասխանատվություն (բարոյասոցիալական իմպերատիվ)*: Եթե բժիշկը պարտավորվում է բուժել հիվանդին, չվնասելով նրա առողջությանը («Յիպոկրատի երդում»), ուրեմն մարզիչը բժիշկների օրինակով պարտավոր է չհաշմեցնել առողջին, նրա հոգին, մարմինը [3]: Վերջին ժամանակներս աշխարհի խոշոր բժշկագետները, մարդկանց կյանքին սպառնացող վտանգները կանխելու նպատակով որոշել են վերանայել (խստացնել) հազարամյակների պատմություն ունեցող Յիպոկրատի պատվիրանները: Ոչ վաղ անցյալի մարզչական գործունեության պատմությանը հայտնի են մի շարք ողբերգական դեպքեր, նույնիսկ մահաբեր վախճանով, որոնք տեղի են ունեցել հիմնականում մարզիչների մեղքով: Գիտնական մանկավարժները [5] նույնպես հիմնավոր են համարում սոցիալական պատասխանատվությունը սպորտում իրավանորմատիվային փաստաթղթերով կանոնակարգելու հարցը:

✓ *Մարզչի պատասխանատվության շրջանակներում պետք է դիտել* նաև մարզիկի կողմից արգելված հատուկ բարձրակտիվ միջոցների (խթանիչների) օգտագործման փորձերը, որոնք ուղղված են օրգանիզմի ռեգերվային կարողությունների գերաժախսման ճանապարհով առավելագույն արդյունքների հասնելուն: Խթանիչների օգտագործումը

նախ՝ անհավասար պայմաններ է ստեղծում մրցակիցների շրջանում, որն անբարոյականություն է, հետո միևնույն ժամանակ, համահարթեցնելով հոգնածությունը, հասցնում է օրգանիզմի կենսակարևոր համակարգերի գործառույթյան անդրսահմանային գերլարվածությանը: Ի վերջո, սպառելով օրգանիզմի էներգետիկ պաշարները՝ կարող է հանգեցնել անդառնալի *հիվանդագին հետևանքների, նույնիսկ մահվան*: Եզակի են դեպքերը, երբ մարզիկն ինքնագլուխ, շրջանցելով մարզչին, կարող է դիմել խթանիչների օգնությանը:

ՍՕԿ-ի բժշկական հանձնաժողովի կողմից (1988թ.) սահմանված է սպորտում արգելված դեղաբանական նյութերի և մեթոդների պաշտոնական ցանկը: Դրանց թվին են պատկանում ԿՆՅ խթանիչները, ցավազրկող թմրանյութերը, նյութագոյացնող (անաբոլիկ) ստերոիդները, ինչպես նաև խթանման մեթոդները՝ արյան դոպինգը (խթանումը) փոխներարկման ճանապարհով, դեղաբանական, քիմիական և մեխանիկական միջամտությունները, ալկոհոլը, տեղական անզգայացումը և այլն: Այսօրվա տվյալներով՝ արգելված խթանիչների ցուցակում ընդգրկված են տարբեր դեղաբանական խմբերի 10 հազարից ավելի քիմիական նյութեր: Դոպինգ-թեստի միջոցով հայտնաբերված խախտումները խստորեն պատժվում են ՍՕԿ-ի կողմից:

✓ *Մեծ է մարզական խմբի, կոլեկտիվի (մարզադպրոցի) կամ մարզական ֆեդերացիայի դերը բացասական երևույթների կանխարգելման և վերացման գործում:*

Խմբում պարապողների քանակը կախված է նրանց պատրաստականությունից: Որքան բարձր է որակավորումը, այնքան փոքրաթիվ է խումբը և հակառակը: Խումբը կամ փոքր կոլեկտիվը, որտեղ պարապում է մարզիկը, ունի իր յուրահատուկ առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են գործունեության բնույթով, միջավայրով, միջանձնային փոխհարաբերություններով: Ենթարկվելով կոլեկտիվի դասական օրինաչափություններին՝ խումբը կարող է հանդես գալ կոլեկտիվին հատուկ բոլոր հատկանիշներով (նպատակաւլաց գործունեություն, փոխադարձ ուշադրություն, փոխադարձ օգնություն և փոխադարձ պատասխանատվություն): Եթե այդ խմբի անդամները իրոք ապրում են ընդհանուր շահերով և

պատրաստ են սատարելու բոլորը մեկին, ինչպես և մեկը բոլորին, ուրեմն այդ խումբը անհրաժեշտության դեպքում պատասխանատվություն կստանձնի յուրաքանչյուրի «արած-չարածի» համար: Եթե խումբը կայացել է որպես կոլեկտիվ, իսկ դա բավականին տևական և բարդ գործընթաց է, ապա մարզիչը կարող է, հենվելով այդ օղակի վրա, լուծել անհրաժեշտ բարոյասոցիալական խնդիրներ:

Մարզչի սաները հաղորդակցվում են բազմաթիվ և տարբեր տեղեկատվությամբ, փոխանակում են կարծիքներ իրենց լսածի և տեսածի մասին, վերլուծում են այս կամ այն վարժության տեխնիկան, քննարկում են առաջատար մարզիկների կատարողական վարպետությունը, նրա շարժաբնույթը, կազմվածքը, պահվածքը և այլն: Մարզիչն այս բոլորի թե՛ «քողարկված» և թե՛ բացահայտ մասնակիցն է ու ձգտում է մոտիկից ճանաչել յուրաքանչյուրին, քաղել նոր տեղեկություններ: Փոխադարձաբար ընթացող այս կարծիքների, համոզմունքների, կասկածների փոխանակությունը կոլեկտիվում շաղախված է հուզական ապրումներով: Յուրաքանչյուրի հույզերն ասես միավորվում են, ամբողջանում ու կրկին ավելի մեծ ուժով համակում բոլորին:

Կոլեկտիվի հուզական ռեակցիան բավական մեծ հնարավորություններ է ընձեռում մարզչին սաների նկատմամբ հոգեհուզական ներգործություն իրականացնելու առումով: Նախ՝ զգացմունքների միջոցով անհատի գիտակցության մեջ ուղղակիորեն գեղագիտական վերաբերմունք է ձևավորվում կյանքի նկատմամբ: Ապա՝ զգացմունքների երանգավորմամբ բարոյական սովորույթներն ու նորմերը դառնում են առավել համոզիչ և ուսանելի: Վերջապես հուզականությունը նպաստում է դեռահասի և պատանու լավագույն կարողությունների բացահայտմանը, ինչը շատ կարևոր է մարզական գործընթացում: Բարձրակարգ մարզիկներից շատերի կենսագրականում կան բազմաթիվ օրինակներ, երբ գեղագիտական հետաքրքրությունները նպաստել են նրանց իրական առաջընթացին: Կոլեկտիվում են ուժ առնում այն զգացմունքները, որոնք անհատի մոտ այլ պայմաններում կարող էին բոլորովին էլ չզարգանալ:

Կոլեկտիվ հույզերը կառավարելի են մարզչի կողմից, և վերջինս կարող է դրանք միտումնավոր առաջացնել: Եթե մար-

զիչը տիրապետում է կոլեկտիվի հուզական ոլորտին, ապա նա կարող է կառավարել ու ճիշտ հունով տանել իր սաների զգացմունքները և իրագործել դաստիարակչական խնդիրներ՝ նպաստելով անձի բարոյասոցիալական ձևավորմանը: Կոլեկտիվում են ձեռք բերվում բարոյական հասունությունը և սոցիալական փորձը՝ մարդկային արժանապատվություն, պարտքի զգացմունք և սոցիալական պատասխանատվություն:

Պետք է նշել, որ մարզիչն այստեղ նույնպես միայնակ չէ: Երկրորդ մարդկային բարենասնությունները ձևավորվում են աստիճանաբար՝ ընտանիքի (կոլեկտիվ), դպրոցի (կոլեկտիվ), մարզադպրոցի (կոլեկտիվ) համատեղ ջանքերով: Մարզիկի կողմից սոցիալական փորձի ձեռք բերմանը, նրա սոցիալականացմանը նպաստում են նաև բակն ու փողոցը իրենց բազմերանգ սոցիալական դրսևորումներով:

✓ *Մանկավարժական լուրջ խնդիր պետք է համարել*, հատկապես պատանի մարզիկի հետագա գործունեության համար, նրա արժանապատվության զգացումի դաստիարակությունը: Պետք է ասել, որ արժանապատվության զգացումը երեխայի մոտ սկսում է ձևավորվել ընտանիքում, դեռ վաղ տարիներից, ծնողի կամ ծնողների օրինակով: Առաջին մկրտությունը ստանում է, երբ դուրս է գալիս բակ և շփվում իր տարեկիցների հետ: Հատկապես, երբ ստեղծվում են անհավասար պայմաններ, ու երեխան ակամայից բախվում է տարբեր դրսևորումների հետ: Հետզհետե ճշգրտվում է նրա վարքագիծը, և այստեղ էլ հիմնականում սաղմնավորվում են նրա *սեփական արժանապատվության զգացումները*:

Ավելի մեծ կոլեկտիվում (դպրոցում, մարզադպրոցում) այդ զգացումները շարունակվում են կարգավորվել պատվախնդրության դրսևորումներով, ինչը պայմանավորված է գործունեության բնույթով, մարզչի և կոլեկտիվի նկատմամբ ունեցած վերաբերմունքով և անպայման, շարժառիթներով պատճառաբանված, ինքնազնահատման աստիճանով: Օրինակ՝ մարմնամարզիկն իր նկատմամբ ունի անձնային բնույթի բոլորովին այլ պահանջներ, քան, ասենք, դահուկորդը, թիավարողը կամ հրաձիգը:

Կոլեկտիվում շարունակվում է մարզիկի սոցիալականացումը, և նրա պատրաստականության աճի հետ զուգընթաց հասունանում է պարտքի զգացումը մարզչի, ընկերների և ողջ կոլեկտիվի նկատմամբ: Նրա սեփական արժանապատվության զգացումը ստանում է նոր երանգավորում՝ առաջատար, հանրածանոթ, ինքնավստահ և հավասարակշռված մարզիկի արժանապատվության զգացում՝ *սպորտային արժանապատվության զգացում*:

Հետագայում, պրոֆեսիոնալ գործունեության ոլորտներում, ինչպես ցույց է տվել պրակտիկան, մարզիկներն իրենց դրսևորում են որպես ակտիվ (նախածեռնող), հավասարակշռված և բարյացակամ, լիարժեք աշխատունակությամբ օժտված, *պրոֆեսիոնալ արժանապատվության բարձր զգացումով անհատներ*:

Անհատական կամ թիմային պայքարում հաղթանակած բարձրակարգ մարզիկների պատվին արտերկրի մրցահարթակներում հաճախ է հնչում ազգային օրհներգը և բարձրացվում ազգային դրոշը: Հենպիոններին քաջածանոթ են *ազգային արժանապատվության վեհ զգացումները*: Դեռահասների և պատանիների շրջանում նման զգացումներ դաստիարակելու նպատակով մարզիչը պետք է ղեկավարվի ինտերնացիոնալիզմի և ջերմ հայրենասիրության գաղափարներով:

ԲՆԱԳԱՎԱՌԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Երբ խոսվում է սոցիալական արատների հանգեցնող բացասական երևույթների և սպորտում դրանց կանխարգելման մասին, ապա չպետք է անտեսվի մարզական ֆեդերացիաների և ազգային օլիմպիական կոմիտեի պատասխանատվության շրջանակներում իրականացվելիք գործունեությունը: Լինելով միջազգային մարզական ֆեդերացիաների և ՄՕԿ-ի հետ սերտ կապի մեջ՝ սպորտի ազգային ասոցիացիաներն իրենց հիմնական գործունեությունը ծավալում են բարձր նվաճումների սպորտում (Օլիմպիական խաղեր, աշխարհի, Եվրոպայի առաջնություններ): Մինչդեռ մանկապատանեկան սպորտին, հատկապես նրա սոցիալական խնդիրներին քիչ ուշադրություն է հատկացվում: Միջազգային կազմակերպությունների օրինակով նրանք պետք է զբաղվեն նաև երիտասարդության

Ֆիզիկական դաստիարակության և զանգվածային սպորտի կազմակերպական, մեթոդական և սոցիալական հարցերով: Մարզական կազմակերպությունները, ինչպես նաև բուհերի, ֆակուլտետների, ամբիոնների համապատասխան կոլեկտիվները գործում են յուրաքանչյուրն իր «սեփական պատյանում»՝ պաշտպանելով «գերատեսչական անձեռնմխելիությունը»: Կոլեկտիվում տիրող բարոյական մթնոլորտից է կախված պատշաճ մանկավարժական (պրոֆեսիոնալ) գործունեության հաջողությունը:

Անցումային շրջանում ֆիզիկական դաստիարակության և սպորտի բնագավառում առաջացած ճգնաժամային երևույթները որոշակիորեն խորացան այն պարզ պատճառով, որ բնագավառի մասնագետները ժամանակին ձեռնամուխ չէղան մշակելու բարեփոխումների համապատասխան հայեցակարգ, այլ շարունակեցին ապավինել ընդհանուր՝ հասարակության մաշտաբով սպասվող (առայսօր դեռ չկայացած) բարեփոխումներին: Հասարակության առողջացման ճանապարհը սկսվում է բոլոր բնագավառների (գիտություն, կրթություն, արվեստ, սպորտ և այլն) բարեփոխումներից, այլ ոչ թե հակառակը: Եթե մենք ցանկանում ենք առաջընթաց ապրել, պետք է նախ խոսենք ֆիզիկական դաստիարակության և սպորտի բնագավառում տեղ գտած բացասական երևույթների մասին, վերացնենք առաջընթացի ճանապարհին ընկած խոչընդոտները:

Կողմնակալությունը, խմբավորումները կոլեկտիվում ավելորդ լարվածության և անվստահության տեղիք են տալիս և չեն կարող նպաստել աշխատանքային առողջ մթնոլորտի ձևավորմանը: Կոլեկտիվի ուժերն աստիճանաբար ջլատվում են, առաջ են գալիս անտարբերության և անհոգության (յուլագնալու) տրամադրություններ:

Կոլեկտիվի համախմբվածության և համերաշխ գործունեության խոչընդոտներից ամենավտանգավորը չար նախանձն է, քանի որ այն քողարկված է, երբեմն էլ շողոքորթությամբ նենգավորված: Չար նախանձի շարժառիթները տարաբնույթ են, իսկ դրսևորումները պայմանավորված են անհատի խառնվածքով, նրա կուլտուրայի մակարդակով:

Նախանձի զգացմունքներ կան մեծ սպորտում, որոնց դրսևորումները, հակասելով ազնիվ և բարի խաղի սկզբունքներին,

րին, անբարենպաստ մթնոլորտ են առաջացնում մարզիկների և մարզիչների շրջանում:

Մանկանը և պատանուն խորթ են նման զգացմունքները, ուստի մարզիչն ամեն կերպ պետք է կանխի դրսից (փողոց, բակ, ընտանիք) նման երևույթների թափանցումը խմբի մեջ: Որպես դրական օրինակ կարող է ծառայել ժանրամարտի դահլիճներից մեկի պատին նշագրված հետևյալ նշանաբանը. «Ծանրամարտիկը պետք է ազատվի նախանձի, ատելության և դժգոհության զգացմունքներից»:

Լրատվամիջոցները, հատկապես հեռուստատեսությունը վաղուց է թափանցել մեծ սպորտի ասպարեզ: Այսօր այն ակտիվորեն միջամտում է մարզական ֆեդերացիաների, օլիմպիական կոմիտեների գործերին: Ելնելով իր շահերից՝ սահմանում է մրցման ժամկետները, տեղը, նույնիսկ կազմում է ծրագիրը և ամենակարևորը՝ հասարակության վերաբերմունքն է ձևավորում (հիարկե, յուրովի) այս կամ այն սպորտի նկատմամբ: Ջանգվածային լրատվամիջոցները, հատկապես հեռուստատեսությունը լուսաբանում են հիմնականում բարձր նվաճումների սպորտում գրանցված հաջողությունները և գրեթե չեն անդրադառնում մրցապայքարին ու նրան նախորդող հավաքներին, մարզումներին և համարյա չեն խոսում անհաջողությունների, դրանց քննարկումների, բարոյասոցիալական խնդիրների մասին: Ինչ վերաբերում է երիտասարդության ֆիզիկական դաստիարակության և զանգվածային սպորտի խնդիրներին, թե որքան ուսանող է ընդգրկված պարապմունքներում (պետական և մասնավոր բուհերում, վարժարաններում), որքան ժամ է հատկացված ֆիզիկական դաստիարակությանը (որ կուրսերում), ինչ վիճակում է նրանց ֆիզիկական բեռնվածությունը, ինչ պայմաններում են ընթանում պարապմունքները և վերջապես շարժողական ինչ պաշարով են բուհ մտնում դպրոցն ավարտած պատանիներն ու աղջիկները, ապա կարելի է ասել, որ հասարակայնությունը բավարար տեղեկատվություն չունի այդ մասին: Որոշ բացառություն են կազմում ռադիոհաղորդաշարերը, որոնք լուսաբանում են մայրաքաղաքի, երբեմն էլ հանրապետության ոչ այնքան հարուստ մարզական կյանքը:

Մեծ է լրատվամիջոցների դերը սպորտի, հատկապես օլիմպիական սպորտի մասին արդի տեղեկատվության, օլիմպիական գաղափարների պրոպագանդման գործում: